ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Գործադիր տնօրեն
Գագիկ Գրիգորյանի
թիվ 45-Լ հրամանով

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Փաստաթղթի կոդ՝ F750-03-01/50
Խմբագրություն՝ 01

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ապահովագրող) 22.05.2023թ.-ի Խորհրդի նիստի թիվ 06 արձանագրությամբ հաստատված «Առողջության ապահովագրության պայմաններ»-ի հիման վրա (Կոդ TC750-03-01, խմբ.08, այսուհետ՝ Պայմաններ):

Սույն Ծրագիրը հանդիսանում է Պայմանների և Ծրագրի հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Սույն Ծրագիրը հաստատված է «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ գործադիր տնօրենի կողմից 29.01.2025թ.-ի թիվ 45-Լ հրամանով: Սույն Ծրագրում կիրառվող հասկացություններն ունեն Պայմաններով, Հայաստանի Հանրապետության օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերով սահմանված նշանակությունը, եթե սույն Ծրագրով դրանց նշանակությունը պարզաբանված չէ:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. Պայմանագրով կարող են ապահովագրվել մինչև 60 (ներառյալ) տարեկան անձինք:

1. 2. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրել 61-65 (65-ը ներառյալ) տարեկան անձանց՝ վերջիններիս վերաբերյալ Ծրագրի հիման վրա կնքված Պայմանագրերը վերակնքելու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

1. 3. Ծառայություններից հնարավոր է օգտվել ՀՀ-ի ցանկացած լիցենզավորված բուժհաստատությունում:

1. 4. Բոլոր ծառայությունները ենթակա են հատուցման Ծրագրով սահմանված ապահովագրական գումարի և/կամ տվյալ ծառայության համար սահմանված սահմանաչափի ներքո:

1. 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ՝ Պայմանագրի գործողության սկիզբ է համարվում Պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող 7-րդ (յոթերորդ) օրվա ժամը 00:00-ն, իսկ ավարտի ամսաթիվ՝ Պայմանագրի սկզբի ամսաթվին հաջորդող 365-րդ օրվա ժամը 23:59-ը:

1. 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԿՆՔՈՒՄ՝ Սույն Ծրագրով Ապահովագրված անձի գծով Պայմանագիրը համարվում է վերակնքված, եթե նոր պայմանագիրը կնքվել է ոչ ուշ, քան նախորդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտի օրվա ամսաթվին հաջորդող 10-րդ (տասներորդ) օրվա ժամը 23:59-ը:

1. 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ՝ ՀՀ:

1. 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ՝ Սույն Ծրագրի պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով վճարվող հատուցման գումարը, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների գծով վճարվող հատուցումների համընդհանուր գումարը չի կարող գերազանցել 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամը:

1. 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ՝ Պայմանագրով սահմանված չափով, վճարման պայմաններով և ժամկետներով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է:

1. 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ՝ Ծրագրի հիման վրա կնքված Պայմանագրերով ապահովագրական պատահար են հանդիսանում Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձի դիմելը Բժշկական հաստատություններ՝ Պայմանագրով սահմանված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից օգտվելու համար՝ կապված առողջական վիճակի վատթարացման և/կամ բժշկական օգնություն պահանջող այլ վիճակների հետ, որը հանգեցնում է Ապահովագրողի՝ Ապահովագրական հատուցում տրամադրելու պարտավորության առաջացմանը:

1. 11. Պայմանագիրը Ծրագրի պայմանների համաձայն վերակնքելու դեպքում, 2-րդ, 3-րդ և հաջորդող տարիների համար ծածկույթին ավելանում է պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն ծառայությունը, որի մասով հատուցումն իրականացվում է համաձայն ստորև շարադրված աղյուսակի.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ		
	1-ին տարի	**2-րդ տարի**	**3-րդ և հաջորդող տարիներ**
Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն	Չի հատուցվում	Հատուցվում է կատարված ծախսերի 50%-ը	Հատուցվում է

2. ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ստորև թվարկված են Ծրագրում ընդգրկված ծառայությունները. բոլոր այն ծառայությունները, որոնց դիմաց առկա է «v» նշումը՝ հատուցվում են Պայմանագրում նշված ապահովագրական գումարի (ապահովագրական գումարի մնացորդի) շրջանակներում՝ հաշվի առնելով Ծրագրում ներկայացված կարգավորումները:

2.1. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՍՈՒՐ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ	**v**
2.1.1 Խորհրդատվություն	**v**
2.1.2 Գործիքային հետազոտություններ	**v**
2.1.2.1 Ռենտգենաբանական հետազոտություններ	v
2.1.2.1.1 Դենսիտոմետրիա	v
2.1.2.1.2 Համակարգչային տոմոգրաֆիա	v
2.1.2.1.3 Հիստերոսալպինգոգրաֆիա	v
2.1.2.1.4 Մամոգրաֆիա	v
2.1.2.1.5 ՊԷՏ համակարգչային տոմոգրաֆիա	v
2.1.2.1.6 Ռենտգենոգրաֆիա	v
2.1.2.1.7 Ռենտգենոսկոպիա	v
2.1.2.1.8 Ռետրոգրադ խոլանգիոգրաֆիա	v
2.1.2.1.9 Սցինտիգրաֆիա	v
2.1.2.2 Ուլտրաձայնային հետազոտություններ	v
2.1.2.2.1 Դոպլեր	v
2.1.2.2.2 Դուպլեքս	v
2.1.2.2.3 Էխոէնցեֆալոգրաֆիա	v
2.1.2.2.4 Էխոսրտագրություն	v
2.1.2.2.5 Ինտրակորոնար դոպլեր	v
2.1.2.2.6 Նեյրոսոնոգրաֆիա	v
2.1.2.2.7 Ներանոթային ուլտրաձայն	v
2.1.2.2.8 Ուլտրաձայնային	v
2.1.2.2.9 Սթրես էխոսրտագրություն	v
2.1.2.2.10 Տանսէզոֆագեալ էխոսրտագրություն	v
2.1.2.3 Էնդոսկոպիկ հետազոտություններ	v
2.1.2.3.1 Արթրոսկոպիա	v
2.1.2.3.2 Բրոնխոսկոպիա	v
2.1.2.3.3 Գաստրոսկոպիա	v
2.1.2.3.4 Լարինգոսկոպիա	v
2.1.2.3.5 Կոլոնոսկոպիա	v
2.1.2.3.6 Կոլպոսկոպիա	v
2.1.2.3.7 Հիստերոսկոպիա	v

2.1.2.3.8 Ռեկտոսկոպիա	v
2.1.2.3.9 Ցիստոսկոպիա	v
2.1.2.3.10 Ֆիբրոսկոպիա	v
2.1.2.4 Մագնիսառեզոնանսային հետազոտություն	v
2.1.2.5 Ֆունկցիոնալ և այլ հետազոտություններ	v
2.1.2.5.1 B scan	v
2.1.2.5.2 Ակնահատակի նկարահանում	v
2.1.2.5.3 ԱՇՖ/արտաքին շնչառության ֆունկցիայի որոշում	v
2.1.2.5.4 Աուդիոմետրիա	v
2.1.2.5.5 Աչքի տոնոմետրիա	v
2.1.2.5.6 Ասպիրատի վերցնում	v
2.1.2.5.7 Ավտոռեֆրակտոմետրիա	v
2.1.2.5.8 Բիոպսիա	v
2.1.2.5.9 Դերմատոսկոպիա	v
2.1.2.5.10 Զարկերակային ճնշման 24-ժամյա մոնիթորինգ	v
2.1.2.5.11 Էլեկտրանեյրոմիոգրաֆիա	v
2.1.2.5.12 Էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություն	v
2.1.2.5.13 Էլէկտրաէնցեֆալոգրաֆիա	v
2.1.2.5.14 Էխոբիոմետրիա A scan	v
2.1.2.5.15 Էխոպախիմետրիա	v
2.1.2.5.16 ԷՍԳ	v
2.1.2.5.17 Իմպեդանսոմետրիա	v
2.1.2.5.18 Կեռատոտոպոգրաֆիա	v
2.1.2.5.19 Համակարգչային պերիմետրիա	v
2.1.2.5.20 Հոլթեր քննություն	v
2.1.2.5.21 Ուրոֆլոումետրիա	v
2.1.2.5.22 Պախիմետրիա	v
2.1.2.5.23 Պունկցիա	v
2.1.2.5.24 ՍՈՎՍ քննություն	v
2.1.2.5.25 Տրեդմիլ հետազոտություն	v
2.1.2.5.26 Օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա	v
2.1.2.5.27 Ֆլյուորէսցենտային անգիոգրաֆիա	v
2.1.3 Լաբորատոր հետազոտություններ	**v**
2.1.3.1 Բիոքիմիական	v
2.1.3.2 Իմունաբանական	v
2.1.3.3 Կլինիկական	v
2.1.3.4 Հյուսվածաբանական	v
2.1.3.5 Հորմոնալ	v
2.1.3.6 Մանրէաբանական	v
2.1.3.7 Շճաբանական	v
2.1.3.8 Ցիտոլոգիական	v
2.1.4 Կոնսերվատիվ բուժում	v
2.1.4.1 Թերապիա	**v**
2.1.4.2 Ինտենսիվ թերապիա	v
2.1.4.3 Հեմոդիալիզ	v
2.1.5 Վիրահատական բուժում	v
2.1.5.1 Ընդհանուր վիրաբուժություն	**v**
2.1.5.2 Սրտանոթային միջամտություններ և վիրահատություններ	v
2.1.5.2.1 Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով	v
2.1.5.2.2 Աորտայի պրոթեզավորում	v
2.1.5.2.3 Կորոնար զարկերակների ստենտավորում	v
2.1.5.2.4 Ռեկորոնարոգրաֆիա	v
2.1.5.2.5 Ռեստենտավորում	v
2.1.6 Դեղորայք և այլ բուժման միջոցներ	**v**
2.1.6.1 Դեղորայք	v

3. ԱՅԼ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

3.1 ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ	
3.1.1 Նյարդավիրաբուժություն	Տարեկան մինչև 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ բացառապես սուր և անհետաձգելի վիճակների համար
3.2 ԴԵՂՈՐԱՅՔ ԵՎ ԱՅԼ ԲՈՒԺՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	
3.2.1 Դեղորայք	Տարեկան մինչև 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ Ծրագրով նախատեսված դեպքերում
3.3 ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	
3.3.1 • Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով • Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում) • Կորոնար զարկերակների ստենտավորում (ներառյալ ստենտի արժեքը)	Տարեկան մինչև 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ բացառապես սուր և անհետաձգելի վիճակների համար
3.4 ՉԱՐՈՐԱԿ ՈՒՌՈՒՑՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ	
3.4.1 Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում	Հատուցվում է
3.5 ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ	
3.5.1 Քրոնիկ հիվանդությունների սրացում	Հատուցվում է մեկ անգամ
3.6 ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
3.6.1 Անգիոգրաֆիկ հետազոտություններ, այդ թվում՝ կորոնարոգրաֆիա	Հատուցվում են միայն այն դեպքում, երբ այդ հետազոտությանը հաջորդում է Ծրագրով նախատեսված վիրահատական միջամտություն
3.6.2 Պլաստիկ և/կամ կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն դժբախտ պատահարի հետևանքով Դժբախտ պատահար է համարվում ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձի կամքից դուրս տեղի ունեցած արտաքին, հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ) իրադարձությունը (դեպք), որի հետևանքով պատճառվել է մարմնական վնասվածք: Ընդ որում դժբախտ պատահարը պետք է ունենա համապատասխան փաստաթղթային ապացույց՝ տրված համապատասխան լիազորված մարմնի կողմից (Ոստիկանություն և այլն):	Հատուցվում է

4. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Սույն ապահովագրության Ծրագրից բացառություն են հանդիսանում և ենթակա չեն հատուցման սույն Ծրագրում որպես բացառություն և հատուցման ոչ ենթակա նշված հիվանդությունները, դեպքերը, բժշկական օգնության տեսակները, վիճակները և այլ ծառայությունները և դրանց հետ կապված ցանկացած ծախս:

Ստորև նշված ծառայությունները, որոնց դիմաց առկա է «-» նշումը չեն հատուցվում, եթե սույն Ծրագրով այլ բան նախատեսված չէ:

4.2. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
4.2.1 ՇՏԱՊ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	-
4.2.2 ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
4.2.2.1 Տնային կանչ	-
4.2.2.2 Խորհրդատվություն	-

4.2.2.3 *Գործիքային հետազոտություններ*	
4.2.2.3.1 *Ռենտգենաբանական հետազոտություններ*	
4.2.2.3.1.1 Դենսիտոմետրիա	-
4.2.2.3.1.2 Համակարգչային տոմոգրաֆիա	-
4.2.2.3.1.3 Հիստերոսալպինգոգրաֆիա	-
4.2.2.3.1.4 Մամոգրաֆիա	-
4.2.2.3.1.5 ՊԷՏ համակարգչային տոմոգրաֆիա	-
4.2.2.3.1.6 Ռենտգենոգրաֆիա	-
4.2.2.3.1.7 Ռենտգենոսկոպիա	-
4.2.2.3.1.8 Սցինտիգրաֆիա	-
4.2.2.3.2 *Ուլտրաձայնային հետազոտություններ*	
4.2.2.3.2.1 ABUS-4D սոնոգրաֆիա	-
4.2.2.3.2.2 Դոպլեր	-
4.2.2.3.2.3 Դուպլեքս	-
4.2.2.3.2.4 Էլաստոգրաֆիա	-
4.2.2.3.2.5 Էխոէնցեֆալոգրաֆիա	-
4.2.2.3.2.6 Էխոսրտագրություն	-
4.2.2.3.2.7 Նեյրոսոնոգրաֆիա	-
4.2.2.3.2.8 Ուլտրաձայնային	-
4.2.2.3.2.9 Սթրես էխոսրտագրություն	-
4.2.2.3.2.10 Տանսէզոֆագեալ էխոսրտագրություն	-
4.2.2.3.3 *Էնդոսկոպիկ հետազոտություններ*	
4.2.2.3.3.1 Բրոնխոսկոպիա	-
4.2.2.3.3.2 Գաստրոսկոպիա	-
4.2.2.3.3.3 Լարինգոսկոպիա	-
4.2.2.3.3.4 Կոլոնոսկոպիա	-
4.2.2.3.3.5 Կոլպոսկոպիա	-
4.2.2.3.3.6 Հիստերոսկոպիա	-
4.2.2.3.3.7 Ռեկտոսկոպիա	-
4.2.2.3.3.8 Ֆիբրոսկոպիա	-
4.2.2.3.4 Մագնիսառեզոնանսային հետազոտություն	-
4.2.2.3.5 *Ֆունկցիոնալ և այլ հետազոտություններ*	
4.2.2.3.5.1 B scan	-
4.2.2.3.5.2 Ակնահատակի նկարահանում	-
4.2.2.3.5.3 ԱՇՖ/արտաքին շնչառության ֆունկցիայի որոշում	-
4.2.2.3.5.4 Աուդիոմետրիա	-
4.2.2.3.5.5 Աչքի տոնոմետրիա	-
4.2.2.3.5.6 Ասպիրատի վերցնում	-
4.2.2.3.5.7 Ավտոռեֆրակտոմետրիա	-
4.2.2.3.5.8 Բիոպսիա	-
4.2.2.3.5.9 Զարկերակային ճնշման 24-ժամյա մոնիթորինգ	-
4.2.2.3.5.10 Էլեկտրանեյրոմիոգրաֆիա	-
4.2.2.3.5.11 ԷլԷկտրաէնցեֆալոգրաֆիա	-
4.2.2.3.5.12 Էխոբիոմետրիա A scan	-
4.2.2.3.5.13 Էխոպախիմետրիա	-
4.2.2.3.5.14 ԷՍԳ	-
4.2.2.3.5.15 Իմպեդանսոմետրիա	-

4.2.2.3.5.16 Կեռատոտոպոգրաֆիա	-
4.2.2.3.5.17 Համակարգչային պերիմետրիա	-
4.2.2.3.5.18 Հոլթեր քննություն	-
4.2.2.3.5.19 Ուրոֆլոումետրիա	-
4.2.2.3.5.20 Պախիմետրիա	-
4.2.2.3.5.21 Պունկցիա	-
4.2.2.3.5.22 ՍՈՎՍ քննություն	-
4.2.2.3.5.23 Տրեդմիլ հետազոտություն	-
4.2.2.3.5.24 Օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա	-
4.2.2.4 *Լաբորատոր հետազոտություններ*	
4.2.2.4.1 Բիոքիմիական	-
4.2.2.4.2 Գենետիկական	-
4.2.2.4.3 Իմունաբանական	-
4.2.2.4.4 Իմունոհիստոքիմիական	-
4.2.2.4.5 Կլինիկական	-
4.2.2.4.6 Հյուսվածաբանական	-
4.2.2.4.7 Հորմոնալ	-
4.2.2.4.8 Մանրէաբանական	-
4.2.2.4.9 Շճաբանական	-
4.2.2.4.10 Ցիտոլոգիական	-
4.2.2.5 *Կոնսերվատիվ բուժում*	
4.2.2.5.1 Ասեղնաբուժություն	-
4.2.2.5.2 Բալնեոթերապիա	-
4.2.2.5.3 Բուժական մերսում	-
4.2.2.5.4 Էքստրակորպորալ բուժման մեթոդներ	-
4.2.2.5.5 Թերապիա	-
4.2.2.5.6 Լազերաթերապիա	-
4.2.2.5.7 Կինեզիոթերապիա	-
4.2.2.5.8 Հալոթերապիա	-
4.2.2.5.9 Հոգեթերապիա	-
4.2.2.5.10 Ճառագայթային թերապիա	-
4.2.2.5.11 Ուռուցքային հիվանդությունների այլ բուժման տեսակներ (ԲՑԺ, Բիսֆոսֆոնատային, Հորմոնալ թերապիաներ, Իմունոթերապիա)	-
4.2.2.5.12 Ուռուցքային հիվանդությունների սիմպտոմատիկ բուժում	-
4.2.2.5.13 Քիմիաթերապիա	-
4.2.2.5.14 *Ֆիզիոթերապիա*	
4.2.2.5.14.1 Ամպլիպուլս թերապիա	-
4.2.2.5.14.2 Գերբարձր հաճախականության թերապիա	-
4.2.2.5.14.3 Էլեկտրաստիմուլյացիա	-
4.2.2.5.14.5 Էլեկտրոֆորեզ	-
4.2.2.5.14.5 Կրիոթերապիա	-
4.2.2.5.14.6 Հարված-ալիքային թերապիա	-
4.2.2.5.14.7 Մագնիսաթերապիա	-
4.2.2.5.14.8 Ուլտրաձայնային թերապիա	-
4.2.2.5.14.9 Ուլտրամանուշակագույն ճառագայթում	-
4.2.2.5.14.10 Ֆոնոֆորեզ	-

4.2.2.6 *Վիրահատական բուժում*	
4.2.2.6.1 Ընդհանուր վիրաբուժություն	-
4.2.2.6.2 Կոսմետիկ վիրաբուժություն	-
4.2.2.6.3 Պլաստիկ վիրաբուժություն	-
4.2.2.6.4 Տեսողության շտկման լազերային վիրահատություն	-
4.2.2.7 *Դեղորայք և այլ բուժման միջոցներ*	
4.2.2.7.1 Դեղորայք	-
4.2.2.7.2 Խոտաբույսեր	-
4.2.2.7.3 Կենսաբանական ակտիվ հավելումներ	-
4.2.2.7.4 Կոսմետիկ միջոցներ	-
4.2.2.7.5 Հոմեոպաթիկ դեղեր	-
4.2.2.7.6 Յուղեր	-
4.2.2.7.7 Վիտամիններ	-
4.2.2.8 *Բժշկական պարագաներ*	
4.2.2.8.1 Անշարժացնող միջոցներ	-
4.2.2.8.2 Բժշկական հարմարանքներ	-
4.2.2.8.3 Լսողական սարքեր	-
4.2.2.8.4 Բժշկական ստենտներ	-
4.2.2.8.5 Բինտ և բամբակ	-
4.2.2.8.6 Երակային կաթիլային համակարգ	-
4.2.2.8.7 Էլաստիկ գուլպաներ	-
4.2.2.8.8 Իմպլանտներ	-
4.2.2.8.9 Կորսետ	-
4.2.2.8.10 Ճողվածքի պլաստիկայի ցանց	-
4.2.2.8.11 Այլ հարբժշկական պարագաներ	-
4.2.2.8.12 Մետաղական կոնստրուկցիաներ	-
4.2.2.8.13 Ներարկիչ	-
4.2.2.8.14 Պարույրներ	-
4.2.2.8.15 Պորտակատի ասեղ	-
4.2.2.8.16 Պրոթեզներ	-
4.2.2.8.17 Վենոզ կատետեր	-
4.2.2.8.18 Օնիքսներ	-
4.2.2.9 *Հղիության վարում*	
4.2.2.9.1 Հղիության ընդհատում բժշկի ցուցմամբ	-
4.2.2.9.2 Հղիության հսկողություն	-
4.2.2.9.3 Վիտամինաթերապիա հղիության ընթացքում	-
4.2.2.9.4 Վիտամիններ հանդիսացող կենսաբանական ակտիվ հավելումներ հղիության ընթացքում	-
4.2.2.10 *Պատվաստումներ*	
4.2.2.10.1 Պատվաստումներ արտասահման մեկնելու համար	-
4.2.2.10.2 Պատվաստում գրիպի դեմ	-
4.2.2.10.3 Պատվաստումներ էպիդեմիոլոգիական ցուցումներով	-
4.2.2.10.4 Պատվաստում կորոնավիրուսի դեմ	-
4.2.2.10.5 Պատվաստումներ հեպատիտ B-ից	-
4.2.2.10.6 Պատվաստումներ նախատեսված մինչև 7 տարեկան երեխաների համար	-
4.2.2.10.7 Ստանդարտ պատվաստումներ երեխաների համար	-

4.2.2.11 *Ատամնաբուժություն*	
4.2.2.11.1 *Հետազոտություններ*	
4.2.2.11.1.1 Ատամնաշարի ռենտգենաբանական	-
4.2.2.11.1.2 Ատամնաշարի օրթոպանտոմոգրամմա	-
4.2.2.11.1.3 Ատամնաշարի համակարգչային տոմոգրաֆիա	-
4.2.2.11.2 *Թերապիա*	
4.2.2.11.2.1 Թերմոֆիլների օգտագործում	-
4.2.2.11.2.2 Կարիեսի և/կամ նրա բարդությունների բուժում	-
4.2.2.11.2.3 Ուղիների մշակում	-
4.2.2.11.2.4 Պլոմբավորում լուսակարծրացնող պլոմբանյութով	-
4.2.2.11.3 *Վիրաբուժություն*	
4.2.2.11.3.1 Աբսցեսի բացազատում	-
4.2.2.11.3.2 Ատամի բարդ հեռացում	-
4.2.2.11.3.3 Ատամի պարզ հեռացում	-
4.2.2.11.3.4 Իմաստության ատամի հեռացում	-
4.2.2.11.3.5 Ռետենցված ատամի հեռացում	-
4.2.2.11.4 Լնդերի բուժում	-
4.2.2.11.5 *Պրոֆիլակտիկա*	
4.2.2.11.5.1 Ատամնաքարերի մաքրում և փայլեցում	-
4.2.2.11.5.2 Ատամների սպիտակեցում	-
4.2.2.11.6 *Օրթոպեդիա*	
4.2.2.11.6.1 Անկերային բույթերի օգտագործում	-
4.2.2.11.6.2 Ատամնաբուժական պրոթեզավորում	-
4.2.2.11.6.3 Կերամիկական շապիկներ	-
4.2.2.11.7 Օրթոդոնտիա	-
4.2.2.11.8 Ատամի իմպլանտացիա	-
4.2.2.12 Օպտիկա	-
4.2.3 ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
4.2.3.1 *Գործիքային հետազոտություններ*	
4.2.3.1.1 *Ռենտգենաբանական հետազոտություններ*	
4.2.3.1.1.1 Անգիոգրաֆիա	-
4.2.3.1.1.2 Կորոնարոգրաֆիա	-
4.2.3.1.2 *Ուլտրաձայնային հետազոտություններ*	
4.2.3.1.2.1 ABUS-4D սոնոգրաֆիա	-
4.2.3.1.2.2 Էլաստոգրաֆիա	-
4.2.3.2 *Լաբորատոր հետազոտություններ*	
4.2.3.2.1 Գենետիկական	-
4.2.3.2.2 Իմունոհիստոքիմիական	-
4.2.3.3 *Կոնսերվատիվ բուժում*	
4.2.3.3.1 Ասեղնաբուժություն	-
4.2.3.3.2 Բուժական մերսում	-
4.2.3.3.3 Էքստրակորպորալ բուժման մեթոդներ	-
4.2.3.3.4 Լազերաթերապիա	-
4.2.3.3.5 Կինեզիոթերապիա	-
4.2.3.3.6 Հոգեթերապիա	-
4.2.3.3.7 Ճառագայթային թերապիա	-

4.2.3.3.8 Ուռուցքային հիվանդությունների այլ բուժման տեսակներ (ԲՑԺ, Բիսֆոսֆոնատային, Հորմոնալ թերապիաներ, Իմունոթերապիա)	-
4.2.3.3.9 Ուռուցքային հիվանդությունների սիմպտոմատիկ բուժում	-
4.2.3.3.10 Քիմիաթերապիա	-
4.2.3.3.11 *Ֆիզիոթերապիա*	
4.2.3.3.11.1 Ամպլիպուլս թերապիա	-
4.2.3.3.11.2 Գերբարձր հաճախականության թերապիա	-
4.2.3.3.11.3 Էլեկտրաստիմուլյացիա	-
4.2.3.3.11.4 Էլեկտրոֆորեզ	-
4.2.3.3.11.5 Կրիոթերապիա	-
4.2.3.3.11.6 Հարված-ալիքային թերապիա	-
4.2.3.3.11.7 Մագնիսաթերապիա	
4.2.3.3.11.8 Ուլտրաձայնային թերապիա	-
4.2.3.3.11.9 Ուլտրամանուշակագույն ճառագայթում	-
4.2.3.3.11.10 Ֆոնոֆորեզ	-
4.2.3.4 *Վիրահատական բուժում*	
4.2.3.4.1 Էնդոպրոթեզավորում	-
4.2.3.4.2 Կոսմետիկ վիրաբուժություն	-
4.2.3.4.3 Պլաստիկ վիրաբուժություն	-
4.2.3.4.4 Սեռափոխության վիրահատություն	-
4.2.3.4.5 *Սրտանոթային միջամտություններ և վիրահատություններ*	
4.2.3.4.5.1 Աորտակորոնար շունտավորում	-
4.2.3.4.5.2 Բարձր հաճախականության էլեկտրոաբլացիա	-
4.2.3.4.5.3 Սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում	-
4.2.3.4.5.4 Սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում	-
4.2.3.4.6 Տեսողության շտկման լազերային վիրահատություն	-
4.2.3.4.7 Օրգանների փոխպատվաստում	-
4.2.3.5 *Դեղորայք և այլ բուժման միջոցներ*	
4.2.3.5.1 Խոտաբույսեր	-
4.2.3.5.2 Կենսաբանական ակտիվ հավելումներ	-
4.2.3.5.3 Կոսմետիկ միջոցներ	-
4.2.3.5.4 Հոմեոպաթիկ դեղեր	-
4.2.3.5.5 Ցուղեր	-
4.2.3.5.6 Վիտամիններ	-
4.2.3.6 *Բժշկական պարագաներ*	
4.2.3.6.1 Անշարժացնող միջոցներ	-
4.2.3.6.2 Բժշկական հարմարանքներ	-
4.2.3.6.3 Բժշկական ստենտներ	-
4.2.3.6.4 Բինտ և բամբակ	-
4.2.3.6.5 Երակային կաթիլային համակարգ	-
4.2.3.6.6 Էլաստիկ գուլպաներ	-
4.2.3.6.7 Էնդոպրոթեզներ	-
4.2.3.6.8 Իմպլանտներ	-
4.2.3.6.9 Կորսետ	-

4.2.3.6.10 Ճողվածքի պլաստիկայի ցանց	-
4.2.3.6.11 Այլ հարբժշկական պարագաներ	-
4.2.3.6.12 Մետաղական կոնստրուկցիաներ	-
4.2.3.6.13 Ներարկիչ	-
4.2.3.6.14 Պարույրներ	-
4.2.3.6.15 Պորտակատի ասեղ	-
4.2.3.6.16 Պրոթեզներ	-
4.2.3.6.17 Վենոզ կատետեր	-
4.2.3.6.18 Օնիքսներ	-
4.2.3.7 Հիվանդասենյակ	-
4.2.3.8 *Հղիության վարում*	
4.2.3.8.1 Հղիության ընդհատում բժշկի ցուցմամբ	-
4.2.3.8.2 Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում	-
4.2.3.8.3 Վիտամինաթերապիա հղիության ընթացքում	-
4.2.3.8.4 Վիտամիններ հանդիսացող կենսաբանական ակտիվ հավելումներ հղիության ընթացքում	-
4.2.3.9 Ծննդօգնություն	-
4.2.4 ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
4.2.4.1 Այլընտրանքային բժշկության մեթոդներ	-
4.2.4.2 Արհեստական բեղմնավորում	-
4.2.4.3 Բժշկական խորհրդատվություն կամ երկրորդ կարծիք միջազգային բժիշկ-փորձագետների կողմից	-
4.2.4.4 Բժշկի կողմից չցուցված կամ սույն Ծրագրով չնախատեսված բժշկական նշանակության ապրանքներ և/կամ ծառայություններ	-
4.2.4.5 Բուժխնամք	-
4.2.4.6 Բուժում արտասահմանում	-
4.2.4.7 Երկրորդ կարծիք	-
4.2.4.8 Խոսքի շտկում	-
4.2.4.9 Կանխարգելիչ բուժզննում	-
4.2.4.10 Կանխարգելիչ նպատակով մատուցվող ծառայություններ	-
4.2.4.11 Հակաբեղմնավորում	-
4.2.4.12 Ոչ բժշկական նշանակության ապրանքներ և/կամ ծառայություններ	-
4.2.4.13 Պարտադիր բուժզննում	-
4.2.4.14 Վերականգնողական բուժում	-
4.2.4.15 Փորձարարական բուժման մեթոդներ	-
4.2.4.16 Քաշի շտկում	-

4.3. ԱՅԼ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
4.3.1 ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
4.3.1.1 Սեպտոպլաստիկա, կոնխոտոմիա, քթի հարակից խոռոչների վիրահատական բուժում	Չի հատուցվում
4.3.1.2 ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ	Չի հատուցվում
4.3.1.3 Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքներ	Չի հատուցվում

4.3.1.4 Տուբերկուլյոզ	Չի հատուցվում
4.3.1.5 Հղիություն և ծննդօգնություն	Չի հատուցվում
4.3.1.6 Նախադիաբետ, շաքարային դիաբետ և դրա բարդությունները, այդ թվում դրանց բացահայտման համար նախատեսված հետազոտություններ	Չի հատուցվում
4.3.1.7 Բացիլակրության, դիսբակտերիոզ, պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը	Չի հատուցվում
4.3.1.8 Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)	Չի հատուցվում
4.3.1.9 Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն՝ բացառությամբ չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրաբուժության	Չի հատուցվում
4.3.1.10 Պլանային հեմոդիալիզ (քրոնիկ երիկամային անբավարարություն)	Չի հատուցվում
4.3.1.11 Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ, այդ թվում՝ պոչուկի էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները (բուժում և հետազոտություններ, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություններ)	Չի հատուցվում
4.3.1.12 Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և/կամ էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում, այդ թվում նշված հիվանդությունների/շեղումների բացահայտմանն ուղղված հետազոտություններ	Չի հատուցվում
4.3.1.13 Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և/կամ սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետաանոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-նևրոտիկ համախտանիշ, գրգռված աղու համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ	Չի հատուցվում
4.3.1.14 Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի և/կամ թմրանյութի և/կամ տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքներ	Չի հատուցվում
4.3.1.15 Քրոնիկ հիվանդությունների բացահայտմանն ուղղված խորհրդատվություններ և/կամ հետազոտություններ, մշտական, պահպանողական բուժում և դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և/կամ հետազոտություններ	Չի հատուցվում
4.3.1.16 Հեպատիտ B, C, D և E (այդ թվում՝ դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները), լյարդի ցիռոզ	Չի հատուցվում
4.3.1.17 Պլաստիկ և/կամ կոսմետիկ և/կամ վերականգնողական նպատակներով իրականացվող վիրաբուժություն, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների	Չի հատուցվում
4.3.1.18 Մաշկի հիվանդությունների՝ կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ, խալեր, կանդիլոմաներ, հետ կապված իրականացվող բուժում՝ վիրահատական և ոչ վիրահատական	Չի հատուցվում
4.3.1.19 Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ)	Չի հատուցվում

4.4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ

4. 4. 1. Մինչ ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն:

4. 4. 2. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ:

4. 4. 3. ՀՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, այլ տարածքներից ներմուծված վարակներ, որոնց սահմաններում հայտնաբերվել և հայտարարվել են համաճարակի օջախներ:

4. 4. 4. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են ներկայացվել հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ խախտվել են վերջինների ներկայացման համար Պայմաններով և/կամ սույն Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ժամկետները:

4. 4. 5. Չլիցենզավորված բժշկական և/կամ այլ հաստատությունների կողմից մատուցված ծառայության դիմաց (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով) իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը:

4. 4. 6. Կատարված բուժումը (այդ թվում՝ դեղորայքային), բուժական միջոցները, հետազոտությունները, որոնք ՀՀ, միջազգային բժշկական ասոցիացիաների արձանագրություններով ճանաչված չեն որպես անհրաժեշտ տվյալ հիվանդության, վնասվածքի, առողջական վիճակի համար:

4. 4. 7. Պայմաններով և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դրույթների խախտումը և/կամ պարտավորությունների չկատարումը:

4. 4. 8. Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու նպատակով խարդախության հատկանիշներ ունեցող հայտի ներկայացումը և/կամ ապահովագրական հատուցման չափի ուռճացումը և/կամ դեպքը որպես ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն ներկայացնելու նպատակով կատարված կեղծ հայտարարությունը:

4. 4. 9. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և/կամ տեղեկանքների տրամադրում:

4. 4. 10. ՀՀ կառավարության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծրագրերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնություն և սպասարկում:

4. 4. 11. ՀՀ-ում սահմանված կարգով չարտոնագրված դեղերի և/կամ բժշկական պարագաների ձեռքբերում:

5. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Ապահովագրված անձը պարտավոր է Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում, բացառությամբ շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի: Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովագրողին տեղեկացումն իրականացվում է հեռախոսով կամ գրավոր, այդ թվում՝ Ապահովագրողի ինտերնետային կայքում կամ LIGA Mobile բջջային հավելվածում հայտն առցանց գրանցելով: Նշված ժամկետի խախտման դեպքում Ապահովադիրը կամ Ապահովագրված անձն առաջին իսկ հնարավորության դեպքում պարտավոր է գրավոր հիմնավորել ուշացման պատճառը՝ կից ներկայացնելով ուշացման պատճառը հավաստող փաստաթղթեր:

5.2. ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. 2. 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ[1] ԱՅՑԵԼԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

- Ընտրել բժշկական կենտրոն
- Զանգահարել ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ +(374 12) 88-88-88 կամ ուղարկել հայտ կայքի միջոցով կամ հայտը գրանցել LIGA Mobile հավելվածում
- Այցելել բժշկական կենտրոն

Այս դեպքում ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ կվճարի անմիջապես բժշկական հաստատությանը:

5. 2. 2. ԱՅԼ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

- Ընտրել բժշկական կենտրոն
- Այցելել բժշկական կենտրոն և ինքնուրույն վճարել տրամադրված ծառայությունների համար
- Ծախսերը կատարելուց հետո 45 օրվա ընթացքում ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍԻ կայքում լրացնել հատուցման դիմումը՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը կամ լրացնել դիմումը LIGA Mobile բջջային հավելվածով:

Այս դեպքում ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ կհատուցի Ապահովագրված անձին իր ապահովագրական պատահարի հետ կապված ծախսերը՝ համաձայն Պայմանագրի պայմանների:

Հայտ	Համագործակցող բժշկական հաստատություններ
Հատուցման դիմում	Հիմնավորող փաստաթղթեր

[1] Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողի հետ համագործակցող բժշկական հաստատությունների ցանկը կարող է փոփոխվել. թարմացված ցանկին ծանոթանալու համար անհրաժեշտ է սկանավորել համապատասխան QR կոդը:

5.3. Հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը ստանալու օրվանից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը կայացնում է ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու կամ նվազեցնելու վերաբերյալ որոշում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ապահովագրված անձին (Ապահովադրին): Ապահովագրական հատուցումը վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում Ապահովագրողը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարում է ապահովագրական հատուցման գումարը: